ՏԵՂԵԿԱՆՔ

«ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի ՀՕ-211-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածում՝

1) վերնագրի «մուծումներ» բառը փոխարինել «նվիրատվություն» բառով.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հիմնադրամը ձևավորվում է տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց, կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների նվիրատվություններից:».

3) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Հիմնադրամին նվիրատվություններ չեն թույլատրվում՝

1) տվյալ տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեցող անձանցից,

2) օտարերկրյա պետություններից,

3) ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից, այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունների,

4) պետական և համայնքային բյուջեներից և (կամ) արտաբյուջետային միջոցներից,

5) պետական և համայնքային կազմակերպություններից, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններից,

6) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանցից,

7) անանուն անձանցից:».

4) 5-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Հիմնադրամին նվիրատվություն կատարելու իրավունք չունեցող սուբյեկտների կողմից քարոզչության հիմնադրամին կատարած նվիրատվությունները փոխանցվում են համայնքային բյուջե:».

5) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Քարոզչության հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների և հիմնադրամներից կատարվող ծախսերի հաշվառման կարգը սահմանում է ~~Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:».~~

6) 7-րդ մասի «մուծում» բառը փոխարինել «նվիրատվություն» բառով.

7) 8-րդ մասի «մուծում» և «կամավոր մուծում» բառերը փոխարինել «նվիրատվություն» բառով.

8) 9-րդ մասի «մուծումների» բառը փոխարինել «նվիրատվությունների» բառով.

~~9) 12-րդ մասի առաջին նախադասության «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» բառերով, իսկ երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ամփոփում է այդ տվյալները, կազմում ամփոփ տեղեկանք և այն տեղադրում իր համացանցային կայքում:».~~

~~10) 14-րդ մասի «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը» բառերով.~~

~~11) 15-րդ մասի «Կենտրոնական ընտրական հանձնաժողովին» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին» բառերով.~~

12) 16-րդ մասի առաջին նախադասության «մուծումների» բառը փոխարինել «նվիրատվությունների» բառով.

~~13) 16-րդ մասի առաջին նախադասության «վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» բառերով:~~

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

~~2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ կետը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերաբերելի մասով, ինչպես նաև 9-11-րդ և 13-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից~~:

~~3. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2023 թվականի հունվարի 1-ը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանում է քարոզչության հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների և հիմնադրամներից կատարվող ծախսերի հաշվառման կարգը:~~